17.04.25 - 17.04.25
11:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան, 503 ընթերցասրահ

Ս.թ. ապրիլի 17-ին՝ ժամը 11:30-17:15-ը, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի 503 ընթերցասրահի մեծ սրահում տեղի կունենա «Կամավորությունից դեպի աշխատանք» խորագրով միջոցառում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների համար:

Միջոցառման ընթացքում ուսանողները կմասնակցեն մի շարք ճանաչողական և կրթական ծրագրերի:

1. *Կայցելեն ԵՊՀ պատմության թանգարան:*

2. *Կմասնակցեն հանդիպման՝ «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ընկերությունը՝ որպես պատասխանատու բիզնես» թեմայով, որի ընթացքում կկազմակերպվի առցանց շրջայց «Կոկա-Կոլա՝ երջանկության գործարան»-ում:*

3. *Կընդգրկվեն «Կամավորությունը և գրագետ CV կազմելու կանոնները» թեմայով ինտերակտիվ դասընթացում:*

4. *Կծանոթանան ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեությանը:*

Միջոցառման ընթացքում ուսանողներին կշնորհվեն նաև հավաստագրեր՝ «Սովորի՛ր և վաստակի՛ր. Արցախ» ծրագրի շրջանակում իրականացրած կամավորական աշխատանքի համար:

Օրակարգը՝ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am